

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումը որպես հիմնախնդիր

Մարգարյան Աննա

Հանգուցային բառեր. *կոմպետենցիա, վարպետություն, կատարելագործում, մասնագիտական որակներ, ինքնակատարելագործում, ինքնակրթություն, արհեստավարժություն*

Ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացմանը ինչը կապահովի մրցունակ մասնագետի պատրաստումը: Այդպիսի մասնագետը ունակ կլինի հարմարվել ցանկացած սոցիալական միջավայրին, ծավալել աշխատանքային որոշակի գործունեություն, ինքնակրթվել և ինքնուրույնաճալ: Կրթական մի շարք փաստաթղթերում նշվում է, որ զարգացող հասարակությանը պետք են կրթված, բարոյական, նախաձեռնող անձինք, ովքեր տարբեր իրավիճակներում ունակ են համապատասխան որոշումներ կայացնել: Կրթական գործընթացում, որպես երաշխավոր, ինքնուրույն մտածողության ձևավորող ու գործունեության արդյունքների կանխատեսող հանդիսանում է ուսուցիչը: Հենց այդ պատճառով բարձրացել է պահանջարկը որակյալ, ստեղծագործական մտածողություն ունեցող, կոմպետենտ ու նախաձեռնող, մրցունակ ուսուցչի նկատմամբ, ով ունակ է արդի, դինամիկ աշխարհում ձևավորել համակողմանի զարգացած անձնավորություն: Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացման անհրաժեշտությունը բխում է վերոնշյալ խնդիրների՝ հնարավորինս արագ լուծման անհրաժեշտությունից:

Ընդհանուր առմամբ, կոմպետենտ է համարվում այն անձը, ով մտքիլիզացիոն և գործառնական ոլորտներում տիրապետում է մասնագիտական գործունեության նորմերին, արդյունավետորեն, բարձր արտադրողականությամբ իրականացնում է աշխատանքային գործունեություն՝ հետևելով բարձր ստանդարտների, ինչպես նաև վարպետության ձգտելով՝ ինքնուրույն կառուցում է պրոֆեսիոնալ աշխատանքային սցենար, ունենում է մասնագիտական կայունացման նպատակակետ, իր մասնագիտությամբ ձգտում է անձի անհատականության զարգացմանը, մասնագիտական փորձը հարստացնում է յուրօրինակ ստեղծագործական ներդրումով, նպաստում է հասարակության մեջ տվյալ մասնագիտության հեղինակության բարձրացմանն ու հետաքրքրության առաջացմանը: Տարբեր մասնագետներ կարող են կոմպետենտությունը ներկայացնել վերը նշված հատկանիշների բացարձակապես այլ շարքեր:

«Կոմպետենտությունը» հասկացությունը ի հայտ է եկել 1960-ական թվականների վերջում եվրոպական երկրներում, իսկ 1980-ականների վերջերին Ռուսաստանի Դաշնությունում: Այա ձևավորվել է ընդհանուր և մասնագիտական կրթության կոմպետենտային մոտեցումը, որը «Ենթադրում է կոմպետենտային մոտեցման հնարավորությունը մանկավարժական գործունեությանը» [1, 61-62]:

Անշուշտ, մասնագիտական կոմպետենտությունը կոմպետենցիաների համալիր է, այն անձի ներքին հոգեբանական բաղադրիչների միասնական համակարգ է, որոնցում անպայմանորեն ներառվում են գիտելիքներն ու հմտությունները:

Գիտնականներ Ա. Ա. Դերկաչը և Ի. Ա. Ջիմյայան համարվում են կոմպետենցիաների դասակարգումների հեղինակներ: Նրանք «կոմպետենտություն» և «կոմպետենցիաներ» գաղափարները կիրառում են ուսուցման վերջնական որակն արտացոլելու համար, որոշներն էլ վերոնշյալ եզրերը կիրառում են տարբեր հատկանիշներով օժտված անձանց բնութագրելու համար:

Ըստ Ջ. Ռավենի՝ «Կոմպետենտությունը մասնագետի ընդունակությունն է, որն անհրաժեշտ է որոշակի կոնկրետ առարկայական բնագավառում կոնկրետ գործողություն կատարելու համար՝ ներառյալ նեղ մասնագիտական գիտելիքները, յուրահատուկ առարկայական հմտությունները, մտածողության ձևերը, իր գործողությունների համար պատասխանատվության գիտակցումը» [8]:

Ն. Եղիազարյանի և Ա. Լազարյանի Անգլերեն-հայերեն բառարանում (2007թ.) «competence» բառը նշանակում է՝ 1) ունակություն, կարողություն, 2) ձեռնհասություն, իրագեկություն, 3) իրավունք, իրավասություն, լիազորություն: Ադունիկ Ակիմյանի Բսպաներեն-հայերեն բառարանում (2009 թ.) «competencia» բառը նշանակում է՝ 1) մրցակցություն, 2) բանավեճ, 3) իրավասություն, պարտականություն: Խաչիկ և Զարուհի Գրիգորյանների Անգլերեն-հայերեն արդի բառարանում (2010թ.), «competente» նշանակում է իրավասու, տեղյակ, բանիմաց: Մեկ այլ աղբյուրում այն ենթադրում է այս կամ այն բնագավառում գիտելիք և փորձ: Ռուսական բառարաններում կոմպետենցիան մեկնաբանվում է որպես հարցերի շրջանակ, որից ինչ-որ մեկն ամբողջությամբ իրագեկ է:

Կոմպետենցիան հարցերի և խնդիրների շրջանակ է, որից մարդը բավականին գիտակ է և այն ստուգված է փորձով: Այսպիսով, կոմպետենտ մարդն օժտված է որոշակի գիտելիքներով, ընդունակություններով, ինչն իրեն հնարավորություն է տալիս յուրահատուկ դարձնել իր գաղափարները և արդյունավետորեն գործել:

Մանկավարժական կոմպետենտություն ասելով՝ հասկանում ենք մասնագիտական գործունեության ընթացքում ուսուցչի տեսական և պրակտիկ գիտելիքների համակցումը: Ըստ Լ. Յու. Կիվցովի՝ «Մասնագիտական կոմպետենտությունը մասնագետի ինտեգրված հատկանիշ է ունեցած գիտելիքների, հնարավորությունների, կարողությունների մակարդակի հիման վրա, ինչն ուղենիշ է հանդիսանում դեպի մասնագիտական արհեստավարժություն» [6]:

Մանկավարժի արհեստավարժությունը դիտարկվում է որպես առարկայական, մեթոդական, հոգեբանամանկավարժական գիտելիքների, կարողությունների, անձնային որակների ամբողջություն և մասնագիտական զարգացման արդյունք: «Մասնագիտական զարգացումը դիտվում է որպես մասնագիտական արհեստավարժության տանող հիմնական ուղի» [4, 23- 24]:

Ուսուցչի անձի զարգացումն ու արհեստավարժությունը փոխկապակցված են և փոխլրացնում են միմյանց:

Ս. Բ. Ելկանովն առանձնացնում է ուսուցչի երեք հիմնական որակ.

1. Ընդհանուր մանկավարժական հատկանիշները, որոնք ներառում են մանկավարժական կողմնորոշումն ու մոտիվացիան:

2. Անհատի հոգեբանական առանձնահատկություններ՝ բնավորություն, խառնվածք, մտավոր կարողություններ և այլն:

3. Մասնագիտական կարողություններ՝ հմտություններ, գիտելիք, փորձ և այլն [5]:

Ն. Վ. Կուզմինայի, Լ. Ս. Միտինայի, Վ. Ն. Վեդենսկու, Տ. Գ. Բրաժեի, Ե. Ի. Ռոզովիրի և ուրիշների կարծիքով՝ մանկավարժական կոմպետենցիան՝

- սահմանափակումները հաշվի առնելու և կանոնակարգերով գործելու ընդունակությունն է,
- գիտելիքներին, կարողություններին, հմտություններին տիրապետելու տեխնիկան է,
- նպատակային կողմնորոշումները, մոտիվները, և հարաբերություններն են,
- այս կամ այն ոլորտի գիտելիքներն ու փորձն են,
- հոգեբանամանկավարժական պահանջների իրազեկության մակարդակն է,
- պրոֆեսիոնալիզմի մակարդակ է, կրեատիվություն,
- որակ է, որն ապահովում է խնդիրների լուծումը [3, 61]:

Կոմպետենտությունը դիտվում է որպես սեփական արդյունավետ ռազմավարությամբ հաջող գործունեությունն ապահովող անձնային ներուժ, իսկ կոմպետենցիաները խնդիրները լուծելու, խոչընդոտները հաղթահարելու, նպատակին հասնելու հաջող գործունեության կոնկրետ ռազմավարություններն են:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունը բաղկացած է հետևյալ կոմպետենցիաներից.

- Ելակետային կոմպետենցիաներ, որոնք հատուկ են ունիվերսալ ուսուցչներին և ապահովում են նպատակային, արդյունավետ մանկավարժական գործունեություն:
- Առարկայական կոմպետենցիաներ, որոնք բնորոշում են կոնկրետ ուսուցիչներին և ապահովում են կոնկրետ ուսումնական առարկայի արդյունավետ դասավանդումը:
- Մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք հատուկ են նեղ մասնագիտությամբ մանկավարժներին և ապահովում են ծագող մանկավարժական խնդիրների լուծումը, անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, հոսքային դասարանների, արտադպրոցական աշխատանքների ժամանակ: Ուսուցչի աշխատանքը հոսքային դասարաններում իրականացվում է ծրագրային, միջառարկայական, հոսքային տարրերն ապահովող կոմպետենցիաներով: Արտադպրոցական աշխատանքների կատարման ժամանակ պահանջվում են ստեղծագործական, կրեատիվ, խթանող կոմպետենցիաներ: Աշխատանքը կրթության

առանձնահատուկ կարիք ունեցող աշակերտների հետ պահանջում է սոցիալական, ախտորոշող և զարգացնող կոմպետենցիաներ:

«Ելակետային, մասնագիտական և առարկայական կոմպետենցիաներն ապահովում են ուսուցչի պրոֆեսիոնալիզմը» [2, 31-34]:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների զարգացումը օրապահանջ է: Պատմական այս փուլում գիտատեխնիկական զարգացման պայմաններում պիտի փոխվեն նաև կրթությանը ներկայացվող պահանջները: Կրթությունն իրականացնող սուբյեկտը՝ մանկավարժն իր իմիջով խիստ տարբեր է նախորդ դարերի ուսուցիչներից: Այսօր աշակերտակենտրոն և փոխներգործուն ուսուցումը պահանջում է այլ որակի մասնագետ: Մանկավարժ, ով կարևորում է աշակերտի մտածողության զարգացումը, ուսուցման ժամանակ հենվում է աշակերտների կարծիքի վրա, փորձում է ավելի ակտիվ ուսուցում իրականացնել:

Դպրոցի գերխնդիրն է կոմպետենտ մանակավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:

Պետության կողմից իրականացվող վերապատրաստումներն ուղղված են խնդրի լուծմանը, սակայն կան թերություններ, որոնք խաթարում են գործընթացի լիարժեքությունն ու ամբողջականությունը: Վերապատրաստումները կարճատև են, բոլորին վերապատրաստում են նույն ձևով, նույն բովանդակությամբ: Առկա բացն ինչ-որ չափով լրացնում են տարբեր ծրագրերի շրջանակում կազմակերպվող սեմինարները և ուսուցչի ինքնակատարելագործումը:

Ուսուցչի արհեստավարժության զարգացումն անհնար է դիտարկել առանց ուսուցչի ինքնակատարելագործման: Այս պարագայում առաջ է գալիս անձի մոտիվացիան, որը դիտվում է որպես գործոնների համակարգ, որոնք բնորոշում են մարդու վարքի ուղղությունը: Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացման համար անհրաժեշտ է ձևավորել ինքնակատարելագործման մոտիվացիա հանուն նոր գիտելիքների և մասնագիտական հմտությունների ձեռքբերման:

Մասնագիտական ինքնակատարելագործումը հնարավորություն է տալիս զարգացնելու մասնագիտական գործունեության կարողություններն ու հմտությունները: Վերջիններս ուսուցչին արդյունավետորեն գործելու հնարավորություն են տալիս, և ըստ Վ. Գ. Գորբի և Վ. Ա. Դյոմինի՝ «Համարվում են մասնագիտական կոմպետենտության ինտեգրացնող բաղադրիչներ» [8]:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության բաղադրիչները, ինչպիսիք են մանկավարժական մշակույթը, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքը, մասնագիտական որակները, գիտելիքները, կարողությունները և հմտությունները անընդհատ թարմացման և վերանայման կարիք են զգում: Ուսուցչի մասնագիտական որակի ապահովումը և բարձրացումը այսօր իրագործվում է հատուկ հիմնարկներում՝ մանկավարժական բուհերում, Կրթության ազգային ինստիտուտում:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների շարքում ոչ միայն կարևո-

րում են մասնագիտական գիտելիքները, այլ կարողություններն ու հմտությունները, որոնց զարգացման շուրջ վերապատրաստման ծրագրերում ևս առկա են բազում թերություններ: Վերապատրաստման ընթացքում գործնական պարապմունքները ֆրոնտալ են, խմբային, չկան անհատական գործնական պարապմունքներ կամ էլ լիարժեք չեն իրականացվում:

Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչը ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:

Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ եկանք եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է, որում մանկավարժական կոմպետենտությունը սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկվածությունների և մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Абросимов В.Н.* Профессиональные качества преподавателя, стандарты и мониторинг в образовании 2001, No 6, 61- 64 с.
2. *Маркова А.К.* Психология труда учителя, книга для учителя. Москва: Просвещение, 1993, 192 с.
3. *Рогов Е. Н.* Учитель как объект психологического исследования. Москва: 1998, 496 с.
4. *Сластенин В. А.* Формирование личности учителя советской школы в процессе профессиональной подготовки. Москва: 1976, 164 с.
5. *Науменко М. В.* Исследование профессиональных представлений педагогов с различным уровнем профессиональной компетентности.
<https://cyberleninka.ru/article/v/issledovanie-professionalnyh-predstavleniy-pedagogov-s-razlichnym-urovнем-professionalnoy-kompetentnosti>
6. *Овчарова Р. В.* Профессиональная компетентность педагога.
<https://psyera.ru/5351/professionalnaya-kompetentnost-pedagoga>
7. *Светлана В. П.* Компетентность учителя <https://nsportal.ru/shkola/inostrannye-yazyki/library/2012/08/29/kompetentnost-uchitelya>
8. *Домнина Н. В.* Профессиональная компетентность современного педагога.
https://infourok.ru/professionalnaya_kompetentnost_sovremennogo_pedagoga-180736.htm?click_id=86AZ1OcOaxZvO8h&aip=5iB5&utm_source=cityads&utm_medium=cpa&utm_campaign=cityads

Проблема развития профессиональной компетентности учителя

Саргсян Анна

Резюме

Ключевые слова: компетенция, мастерство, совершенствование, профессиональные качества, самосовершенствование, самообразование, профессиональность

В статье обсуждаются пути и виды развития профессиональной компетентности учителя. В статье компетентность объясняется как личный потенциал, условие успешной деятельности, а компетенция – это стратегия успешной деятельности.

В статье обращено внимание на базовые, предметные и профессиональные компетенции, которые обеспечивают профессионализм учителя.

Очень важным является развитие таких компетенций, которые формируют и обеспечивают профессионализм учителя. Особо подчеркивается роль самообразования в этом процессе, как условие формирования предметных, методологических знаний, способностей и личностных качеств будущего учителя.

Итак, концепция компетентности в образовательной практике включает интеллектуальный потенциал образования, что является неотъемлемой частью обучения и включает в себя знания и навыки, широкий спектр культуры и т.д. Компетентность преподавателя позволяет решать повседневные жизненные и профессиональные проблемы в современных образовательных условиях, способствует формированию человека в соответствии с требованиями времени, в результате чего педагогическая деятельность строится и оценивается на основе компетентностного подхода.

The Teacher's Professional Competence Development as a Problem

Sargsyan Anna

Summary

Keywords: *competence, mastery, perfection, professional qualities, self-improvement, self-education, professionalism*

The article discusses the ways and forms of teacher professional competence development. In the article, competence is explained as a personal capacity, which is viewed as a condition of successful activity and competences are strategies of successful activity. Reference is made to the baseline, subject and professional competencies that provide professional professionalism of the teacher. It is important to develop such competencies that form and provide the teacher's professional competence. Particular emphasis is placed on the development of professionalism of the teacher and self-education as a qualitative, competent, comprehensive, objective, methodological, psychological and pedagogical knowledge, capacities, personal qualities as a result of professional development and as the main path to professionalism. Thus, the concept of competency in educational practice involves the intellectual and educational potential of education, i.e., it is an integral character and includes the capabilities and knowledge of a wide range of culture and activities. The competency of the teacher allows the teacher to solve everyday vital and professional issues in contemporary educational conditions, contribute to the formation of a person who meets the requirements of time, as a result of which the pedagogical activity is assessed on the basis of the competing approach.